
ԽԵԼԱԳԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ «ԼՈՌԵՑԻ ՍԱՔՈՆ» ՊՈԵՄՈՒՄ

ՆԱՌԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ամեն մի նոր բանաստեղծ, իմաստավորելով իր ապրած ժամանակը, խտացնում է հարատև ճշմարտություններ, որոնցով կապվում է գալիք սերունդների հոգևոր աշխարհին: Բացելով իր հոգու դռները՝ զրույց է սկսում մեծ աշխարհի հետ, խոսում բոլոր ժամանակների մարդու մասին, որի սիրտը ժամանակի անվերջ հոլովություն մույն հանգով է տրոփում:

Մարդու և բնության հավերժական կապի առեղծվածն ու մարդու հոգեբանության բաղադրությունը բացահայտելու խնդիրն է քննում Թումանյանը իր պոեմներում՝ հատկապես «Լոռեցի Սաքոն» պոեմում՝ դրանով էլ ավելի խորացնելով երկի գեղարվեստական ուժն ու արդիականությունը:

«Լոռեցի Սաքոյի» շուրջ ծագել են լուրջ բանավեճեր: Թումանյանը մեղադրվում էր հոգեբանորեն անհամոզիչ կերպար ստեղծելու մեջ: Այս խնդիրն անդրադարձել են շատերը, մասնավորապես՝ Լեոն: Ինչպես երևում է բանաստեղծի նամակներից, պոեմը վեճեր է հարուցել, երբ դեռ լույս չէր տեսել և ընթերցվել էր մտերիմների շրջապատում: Այդ վեճերը կարևոր է հիշատակել, քանի որ վերաբերում են պոեմի հերոսի հոգեբանական պատճառաբանվածությանը, որը հաճախ է ծագել Թումանյանի մյուս պոեմների հերոսների ներաշխարհային համոզականության կապակցությամբ: Անուշավան Աբովյանին գրած նամակում Թումանյանը հիշում է Ղ. Աղայանի հետ ունեցած բանավեճը. «... կարդացինք «Լոռեցի Սաքոն»։ Աղայանցը նույնիսկ առաջին տողերից շատ բծախնդիր լինելով, ես ստիպվեցա պահպանողական դիրք բռնել. միմյանց չըզիջանք. այնպես որ բանը վիճաբանության փոխվեց (բայց, իհարկե, մեղմ): Այս մարդու հատկանիշն է միշտ նախապաշարված վերաբերվել դեպի ուրիշները: Դեռ կեսը չըհասած մի գոռոռոց սարքեց, թե բոլորովին հոգեբանությանը հակառակ է Սաքոյին խելագարեցնելը. ես հակառակն ապացուցեցի. բայց նա, դժգոհ իմ բացատրությունից, այսպիսի հարցեր առաջարկեց. - Տարվա ո՞ր եղանակին է խելագարվում: Նրանց ցեղում էլ խելագար եղա՞ծ է, թե չէ. ինչո՞ւ չէ խելագարված փախչելիս մի քարից վեր ընկնում, մեռնում...»¹:

Իսկ երբ Թումանյանը նրան ասում է, որ այս պոեմը մի քանի ուսանողներ և գրողներ մի շատ հաջողված հոգեբանական ճշմարտություն են համարել և հավանել՝ «... մանավանդ պ. Պերճը յուր «հրաշալի է» և այլ խոսքերով, մեր վիթխարին ասաց, որ նրանք հոգեբանության այբուբենն էլ չգիտեն»²:

Պոեմը տպագրվելուց հետո էլ վեճերը շարունակվում են: Դարձյալ նույն Անուշավան Աբովյանին գրած նամակներից մեկում Թումանյանը այդ

¹ **Յովհ. Թումանյան**, Երկերի ժողովածու, հ. 5, Եր., 1945, էջ 19-20:

² Նույն տեղում, էջ 19-20:

վեճերի կապակցությամբ գրում է, թե՛ «մի շատ համառ կարծիք կա» «Լոռեցի Սաքոյի» մասին և դա առհասարակ «լուսավորվածների» մոտ է, որ «նա լինելով առողջ և աներկյուղ «իզիթ», չէր կարող վախենալ քաջքերից և խելագարվել»: Թումանյանը դեմ է այդ կարծիքին, գտնում է, որ **ամեն մարդու մեջ կա խորհրդագագացություն**. «Դու խո լավ գիտես, – գրում է նա ընկերոջը՝ Անուշավան Աբովյանին, – որ կան մարդիկ, – իզիթ մարդիկ, որ աշխարհք վրա գա - աչք չեն ճախլ. ամա ինչ անես՝ մեռելից, անշունչ մեռելից վախում են, սպանես, մի ավերակի մոտից մենակ անց չեն կենալ...»³:

Պոեմի «անհավանականության» մասին, ինչպես վերը նշվեց, տպագիր խոսքով հանդես եկավ Լեոն և՛ «Լոռեցի Սաքոյի» երկրորդ հրատարակության առթիվ գրած հոդվածում, և՛ «Ռուսահայոց գրականության պատմության» մեջ՝ գտնելով, որ Սաքոյի նման «աժդահա» հերոսը չէր կարող խելագարվել, այլ կդիմադրեր «քաջքերի» գրոհին⁴: Իսկ 1910 թ. «Յանդեւ ամսօրեայ»-ի էջերում պոեմի նկատմամբ խիստ ժխտական էր Գր. Բալասանյանի դիրքորոշումը, թեև հոդվածը ընդհանուր առմամբ դրվատական էր⁵: Պ. Մակինցյանը 1912 թ., Թումանյանի պոեզիայի շատ բարձր գնահատականների կողքին, Սաքոյին որպես տիպ համարում էր «անկարելիություն»: «Անհավատալի է, – գրում էր նա, – որ մեր օրերի չորանը վերհիշելով տատի գրույցները չարքերի մասին, այնքան խորն ու ինտենսիվ վերապրի այն հուշերը, որ խելագարության հասնի: [...] Իսկ եթե դա մի եզակի, մի ուրույն դեպք է [...] Յովհաննես Թումանյանը չի կարողացել մեզ այնպես ներկայացնել իր հերոսի ապրումները, նրա բնավորության ուրույն հատկությունները, որ մեզ համոզիչ թվա նրա պատմությունը»⁶:

Դիտելի է, որ «Լոռեցի Սաքոն» պոեմի գնահատության մեջ բոլոր հետազոտողները նույն վրիպումն ունեն. նրանք չեն խոսում մարդկային հոգեկերտվածքի մասին: Թումանյանը հայտնաբերում էր ժողովրդական կյանքի, կենցաղի հոգեբանությունը, որը շատ աննշան տեղ էր գրավում նախորդ շրջանի պոեզիայում: Կենցաղի հետ միասին նա բերում էր մի ուրիշ նորություն. ժողովուրդը ներկայացվում էր ոչ միայն կենցաղով, այլև մտածողությամբ, հոգեբանությամբ և հուզական աշխարհով: Այս շրջադարձային երևույթի իմաստը դժվար էին հասկանում անգամ զարգացած, կրթված քննադատները:

Թումանյանի ուշադրության կենտրոնում է եղել մի կարևոր գեղարվեստական խնդիր. ուժեղացնել հերոսի հոգեբանական դրաման, գեղարվեստորեն հիմնավորել այն, և նրա ապրումները կապել շրջապատի, մանկությունից ստացած տպավորությունների հետ (կարելի է ենթադրել, որ այս պոեմը ինչ-որ չափով հիշեցնում է «Պատրանք» բանաստեղծությունը): Այդ պատճառով շուրջ տասը տարի նա աշխատում է պոեմի վրա, գրում երկու տարբերակ, 1896 թ. հրատարակում է նոր մշակումը, իսկ 1903-ին՝ երրորդ տարբերակը: Առաջին տարբերակում (1889) Թումանյանը իր հերոսի հոգեկան զարգացման թեման ձգտում էր բացահայտել բնու-

³ Նույն տեղում, էջ 36:

⁴ Տե՛ս Լեոյի գրախոսականը Լոռեցի Սաքոյի մասին, «Մշակ», Թիֆլիս, 1896, № 57:

⁵ Տե՛ս Գր. Բալասանեան, Յովհաննես Թումանեան, «Յանդեւ ամսօրեայ», Վիեննա, 1910, № 1, էջ 6-7:

⁶ Պ. Մակինցյան, Դիմագծեր, Եր., 1980, էջ 29:

թյան և կենցաղի լայն պատկերի վրա. թովիչ բնության, հովվական պարզ կյանքի, թուրքերի սարսափների և քաջարի հայերի կռիվների նկարագրությունները խանգարել են բանաստեղծին լայն բացելու և ցույց տալու հերոսի հոգին: Երկրորդ տարբերակում հերոսի հիշողության մեջ թումանյանը ավելացրեց վերակենդանացող երգը չարքերի մասին, որը հետագայում մտավ վերջնական տարբերակ: Պոեմի մեջ մտան Սաքոյի քաջության, «իգիթության» նոր պատկերները (հատված IV), Սաքոյի երգը թուրք ավազակների դեմ հովիվների մղած պայքարի մասին (հատված VII): Ավելացավ նաև խելագար Սաքոյի՝ գյուղում հայտնվելու նկարագրությունը: Սակայն այս ամենը բանաստեղծին ավելի հեռացրեց հիմնական գեղարվեստական խնդրի խորացումից: Իսկ ահա երրորդ տարբերակում թումանյանը հրաժարվեց բոլոր կողմնակի գծերից, կենցաղային մանրամասներից⁷ (որի հետևանքով պոեմի ծավալը փոքրացավ ավելի քան երկու անգամ), որպեսզի ամբողջ խորությամբ իրագործի գլխավոր խնդիրը՝ Սաքոյի խելագարվելու գեղարվեստական և հոգեբանական հիմնավորումը:

Թումանյանի ստեղծագործություններում խելագարն իբրև տեսակ հաճախ է հանդես գալիս (խելագարությունը գրականության նյութ էր դարձել և տարբեր տեսանկյուններից դիտարկվել): Դեռ Շեքսպիրն է ասել, որ մեծ խելացնորությունն ունի իր տրամաբանությունը: Թումանյանը խելագարությունը քննում է իբրև հոգեբանական որակ և ոչ երբեք հոգեվիճակ: Մեզմից յուրաքանչյուրը ինչ-որ չափով խելագար է, և յուրաքանչյուրիս մեջ հող կա խելագարության համար: Մարդը՝ որպես էակ, միշտ միայնակ է: Մարդը տիեզերք է: Անընդհատ կռիվ գոյություն ունի անհատի մեջ՝ իր ներաշխարհից չհեռանալով հանդերձ՝ արտաշխարհում մնալու համար: Ամեն մեկն իր պատկերացումներն ունի: Ընկալումների աշխարհը տարբեր է:

«Լոռեցի Սաքոն» պոեմը մեր գրականության ամենահոգեբանական, ամենախոր պոեմներից է: Պոեմն սկսվում է Լոռվա ձորի նկարագրությամբ: Դա սովորական բնապատկեր չէ (Սաքոյի հոգեվիճակն է), ունի հոգեբանական ուրույն լիցք՝ նախապատրաստում է հերոսի մուտքը.

**Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց
ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝
Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ
Չայացքով իրար նայում են հանդարտ:**

Թումանյանը իր պոեմների («Մարոն», «Լոռեցի Սաքոն», «Անուշը») նախերգերում ստեղծում է տրամադրություն, որը հետագայում վերածվում է տրամաբանության: Նախերգը Սաքոյի ներաշխարհն է բացահայտում: Ավելի ճիշտ՝ Սաքոյի արտաշխարհային ընկալումն է՝ բացարձակապես ատավիստական (ամեն ինչի մեջ հոգի տեսնելը): Սաքոյի համար բնական ամեն ինչ նաև գերբնական է:

Ժայռն ու ձորերը նրա համար անշունչ առարկաներ չեն: Այն, ինչը բնական չէ, նրանից դուրս է: Դեբեդ գետը զարմանալի անցումով վերածվում է Դև-Բեդի (առասպելական ընկալումը): Սա հերոսի հոգեբանությունն է: Նրա գիտակցության մեջ բնությունը ոչ միայն շնչավորված է, կենդանի, այլև «բնակեցված» է անհայտ ոգիներով և գերերկրային ուժերով.

⁷ Ի դեպ՝ առաջին տարբերակի վերաբերյալ քննադատության մեջ առանձին համակրանքով նշվում էին հենց բնության տեսարանները:

Մութ անձավներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ` հըտպիտ ձայներով
Դևի հառաչքին արձագանք տալի,
Ծաղրում են նրա գոռոցն ահռելի
Ու կըրկնում գիժ-գիժ.
-Վա՛շ-վիշշ, վա՛շ-վի՛շշ...

.....
**Ոգի է առնում ամեն բան էնտեղ,
Շընչում է, ապրում և մութն և ահեղ:**

Նախնադարյան վաղ ժամանակներից են սկզբնավորվում բնության անշունչ առարկաների և երևույթների շնչավորումը, մարդու և շնչավորված առարկաների, ինչպես նաև կենդանիների միջև պատկերացվող խորհրդավոր կապերի, փոխադարձ կերպարանափոխումների և այդ ամենի վրա մարդու կողմից հմայական ներգործության հավատալիքը:

Բնության համատարած ոգեղենացման նախնադարյան հավատալիքի և հասարակական հարաբերությունների զարգացման ու բարդացման հիմքի վրա աստիճանաբար ձևավորվում է բնության և հասարակության բարի և չար ուժերը մարմնավորող ոգիների գոյության հավատալիքը` իր երկակի դրսևորումներով` աստվածային և դիվային` պայմանավորված վերի և վարի (երկինք-երկիր), լույսի և խավարի (ցերեկ-գիշեր), կյանքի և մահվան հակադրություններով: Հին ավանդությամբ վկայված կենդանակերպ ոգիներից են քաոսային կործանարար ուժերը մարմնավորող վիշապը, ջրացուլը, քաջքերը, հավերժահարսերը, մարդակերպ ոգիները և այլն⁸: Հետաքրքիր է նաև Առաքել եպիսկոպոսի նուրբ դիտարկումը. «Յաւերժահարսունքն և անբան կենդանիք` բնութեամբ ունին զգիտութիւն և ոչ զայն մոռանալ կարեն և ոչ այլ նոր ուսանել»⁹: Մ. Աբեղյանը գրում է, որ Սաքոն, «նախնի մարդու նման, բնության տեսքն ու ձայներն ըմբռնելով հանդերձ, երևակայում է այդ բնությունը լցված գերբնական ոգիներով»¹⁰:

Թունանյանը բնության շնչավորումը գեղարվեստի վերածելով` ստեղծել է բնապատկերի և ապրումի ներքին կապ. նա զգում է բնության ուժերի տարերքն ու խորհրդավորությունը, շարժման մեջ է դնում երկրային և գերերկրային երևույթները: Բնության խաղերը մասնակցում են գալիք գործողության հոգեբանական նախապատրաստությանը: Եթե առաջին տարբերակներում «քանդած հին բերդի» և «ավերակ վանքի» մասին միայն ասվում էր, որ դրանք «կանգնած են» ժայռի գլխին, ապա այստեղ վանքը «աղոթում», իսկ բերդը «հսկում » է`

Էս տախտի վըրա աղոթում մի վանք,
Էն ժայռի գըլխին հըսկում է մի բերդ,
Իսկ քարի գըլխից, **լուռ մարդու նման,**
Նայում է ձորին մի հին խաչարձան:

⁸ Այս մասին հանգամանորեն տես **Ս. Հարությունյան**, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Եր., 2001, էջ 5-15:

⁹ **Մ. Աբեղյան**, Երկեր, Է, Եր., 1975, էջ 87:

¹⁰ Նույն տեղում, էջ 366: Ի դեպ` բնության ոգիների և «Լռռեցի Սաքոն» պոեմի վերլուծության մասին հեղինակը հետաքրքիր տեղեկություններ է տալիս նշված աշխատության մեջ (տես էջք 85-89, 95-98, 365-368):

Թումանյանը աստիճանաբար բացում է միայնակ մարդու «հոգեխռով վիճակը»։ ստեղծվում է հոգեբանական հոսանքը, և ողջ ընթացքում հոգեբանական տարրերը անընդհատ կուտակվում, ուժգնանում են՝ լուռ, ներփակ, ահագնացող: Ներքին լարումը հերոսին բևեռացնում է մի մտքի շուրջ, առաջացնում հոգեկան տատանումներ ու շփոթ, հանգեցնում կասկածի: Հերոսը կորցնում է ժամանակի զգացողությունը: Եվ ընդամենը մի քանի տողի միջոցով Թումանյանը մեկնում է Սաքոյի մենակության ոչ միայն պատճառը, այլև սաստկացող ազդեցության տիրույթը.

Հովիվ է Սաքոն, ունի մի ընկեր.

Սատանի նրման՝ նա էլ էս գիշեր

Գրնացել է տուն: Սարերի չոբա՛ն –

Գյուղիցը հեռու, **հազար ու մի բան:**

Թումանյանը շատ լավ էր ճանաչում **իզիթ** մարդու էությունը. նա աստիճանաբար բացում է այն: Մենակ է Սաքոն իր վրանում և տխուր, իսկ մենակությունն իր ու աշխարհի հետ արդեն փոխել է իզիթ Սաքոյի տրամադրությունը.

Ու Սաքոն անքուն,

Թաց տրեխները հանել է, քերել,

Գուլպան բուխարու վըրա կախ արել

Ու թինկը տըվել,

Մեն-մենակ թըթվել:

Չկա բացարձակ կենտրոնացում մենակության մեջ: Թումանյանը հատուկ շեշտում է «սատանա» բառը: Սատանան եթե ոչ վախ, ապա գոնե խորհրդավորություն է ստեղծում մարդու մեջ: Բնությունը նվաճում է մարդու ոչ միայն կենսադաշտը, այլև հոգևոր-իմացական աշխարհը: Բհագավան Շրի Ռաջնիշը (Օշո) գրում է, որ «միայն ֆիզիկական միայնակությունն է հաղթահարվում, իսկ հոգեկան միայնակությունը մնում է անհասանելի»¹¹:

Հետաքրքրական է այն, որ Թումանյանը մի ներքին ենթատեքստով տեսնում է, որ բնության խավարի նման առասպելական է նաև մարդու էությունը: Եվ այսպես, Սաքոն մնացել է մենակ. կասկածը մտացրիվ է դարձրել նրան և վախկոտ. «Լսվում է երկյուղի հեռավոր ձայնը, բայց պոետը հերոսի ներաշխարհի բացահայտումն սկսում է հակառակ ծայրից. «բացասում» է վախը, որը «հանգեցնում է հակադարձ արդյունքի»¹².

Թեկուզ և մենակ լինի փարախում.

Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում:

Սա, ըստ էության, «Սաքոյի ներքին մենախոսությունն է»¹³, - ինչպես դիպուկ նկատել է Մ. Մկրյանը:

Հապա մի նայի՛ր **հըսկա հասակին**

Ո՛նց է մեկնըվել: Ասես ահագին

Կաղնըքի լինի անտառում ընկած:

¹¹ Յու. Հովականյան, Հոգեվերլուծական փիլիսոփայություն, Եր., 2001, էջ 167:

¹² Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 210:

¹³ Մ. Մկրյան, Հովիհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1981, էջ 63:

Հսկա հասակը քիչ դեր կարող է խաղալ, երբ կասկածն ու վախը քայլ առ քայլ թափանցում են լոռեցի Սաքոյի անպատրաստ միտքն ու հոգին: Արտաքնապես դրսևորվող կամքի ուժը հաճախ ներքին վախը ճնշող, գիտակցությունից անցանկալի մտքերն արտամղող պաշտպանական միջոց է: Եվ իրոք, ինչի՞ց պետք է վախենար Սաքոն: Սաքոն լեռներում է մեծացել, իրականության մեջ ստեղծել-հայտնաբերել է միջակայքի որակներ: Նրանից վախենում են թե՛ գող, թե՛ գազան և «Հեռու են փախչում նըրա փարախից»:

Ամեն մի բնագոյ սկսվում է հանգիստ կամ մարած վիճակից. նույնը և վախը: Սա ոչ թե զուտ ֆիզիոլոգիական, այլ լիարժեք հոգեբանական երևույթ է: Սաքոն չի գիտակցում, որ վախը կազմող հոգեբանական տարրերը (մտապատկերները, ձայները) իրենց ողջ մերկությանը հանդես չեկող մտքերի ու միտումների փոխարինողներն են, անգիտակցական հոգեկան երևույթների աղճատված ու մասամբ նաև խորհրդանշական դրսևորումն են: Նա այդ որակների ժառանգականության կրողն է ու պահպանողը: Իսկ «իրականության»՝ խավարի հանդեպ սարսափը պետք է հաղթահարվի ես-ի ինքնապաշտպանական բնագոյի դրսևորմամբ:

**Իսկ եթե տեղից վեր կացավ հանկարծ,
Գլուխը մեխած մահակը ձեռքին՝
Ձեն արավ, կանչեց զալում շըներին
Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար...**

Սա սեփական երկյուղը հաղթահարելու հակադրական ապրում է: Սաքոյի գիտակցության սրման հետ միաժամանակ խորանում է նրա միայնակությունը. նա սարսափում է դրանից: Միայնակ մնացած մարդը չի կարող խուսափել իր ներաշխարհը տակնուվրա անող մտքերի խառնիխուռն ընթացքից, և ահա հանկարծ որտեղից որտեղ միտքն են գալիս տատի պատմած հեքիաթները, որոնք շատ սովորական հեքիաթներ էին առասպելական պատկերացումների մասին (ջահելների տոնակատարության, հարսանիքի, կերպարանք առած չարքերի): Չարքը վտանգավոր է իր անճանաչելիությամբ: Իսկ մարդը աշխարհը պատկերացնում է այնքանով, որքանով այն գիտի:

Միտն եկան ու մեր Սաքոն **ակամա
Սկսավ մըտածել չարքերի վըրա,
Թե ինչպես ուրախ խըմբով, միասին,
Ծուռը ոտներով, գիշերվան կիսին,
Թուրքերի կանանց կերպարանք առած,
Երևում են միշտ միայնակ մարդկանց...**

Գիշերը ներքին խորհրդագագացության սարսուռով է լցնում մարդու հոգին: Միտքը անեզրություն ունի, մենակության մեջ է թափառում: «Եթե կարելի է այսպես ասել, – գրում է Հր. Թամրազյանը, – բանաստեղծը միայնակ տազնապող հերոսի երևակայության միջոցով ստեղծում է մի ուրիշ աշխարհ, որը խոր արմատներ է ձգել նրա հոգում դեռ մանկությունից, ավելի ճիշտ՝ նա հենց այդ ճանապարհով շարժման մեջ է դնում գերբնական ուժերին»¹⁴: Կարելի է ասել, որ «Լոռեցի Սաքոն» դրամա է՝ մեկ հերոսով,

¹⁴ Հր. Թամրազյան, Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Եր. 1995, էջ 13:

ինչպես նկատել է Հր. Թամրազյանը: Դրաման ծագում է բանականության ու զգացմունքների հակասությունից: Սաքոն միանգամից չի ենթարկվում վախի զգացմանը, բայց որքան նա դրա համար ճիգեր է գործադրում, այնքան ավելի է սաստկանում նրա վախը, ստեղծվում է ներքին դրամա, մարդու մաքառումն իր իսկ դեմ: Սաքոն նման է ճահճից առանց հենասյան դուրս ձգտող մարդու: Տասի պատմած հեքիաթները խախտում են Սաքոյի հոգեբանության ներքին հավասարակշռությունը: Եվ ահա.

**Ու տատի խոսքերն անցյալի հեռվից
Ուրվաձայն, երկչոտ հնչեցին նորից.
- Կասեն՝ Սաքո՞, մեզ մոտ արի,
Արի՛ մեզ մոտ հարսանիք.**

.....
- Ինձ մոտ արի՛ ձվածեղ անես...
- Ինձ մոտ արի՛ բըլիթ տամ...

Սաքոն դեռ զգում ու գիտակցում է չարքերի «գիտակցված» խաբեությունը, «ինչ որ ներքին ուժի լիցքերով շարունակվում է մարդու բանականության և ենթագիտակցական աշխարհի առեղծվածային երևույթների բախումը, [...] աշխարհի հազար-հազարավոր ընկալումներ լռելյայն կուտակվում են և սպասում շիկացման յուրօրինակ պահերին: Եվ դա, ըստ էության, թաքուն ընթացք է տալիս մարդու ճակատագրին [...] լուսերես է հանում մարդկային ներքին աշխարհի բարդություններից մեկը՝ [...] տալով նրան մարդագիտական կարևոր նշանակություն»¹⁵:

Մարդն անընդհատ ձգտում է ընդարձակել իր գիտակցության ոլորտը, թափանցել բնության և սեփական էության խորքերը: Ընդ որում՝ ներքին աշխարհը ճանաչելն ավելի բարդ խնդիր է: Մեր անիրական երազները, մեր ապրած խորհրդապաշտական սարսափները, Աստծո, սատանայի և այլ ոչ իրական էությունների պատկերացումները գալիս են ոչ թե արտաքին աշխարհից, այլ մեր ներքին փորձի արդյունքն են և մեր հոգեկանի անբաժան մասը: Յու. Հովականյանը իրավացիորեն հիշարժան է համարում Յունգի այն կարծիքը, թե հոգեկանը ինչպես գիտակցական, այնպես էլ անգիտակցական գործընթացների համախմբություն է: Նա հանգում է այն եզրակացության, որ անձնական անգիտակցականի հիմքում ընկած է խմբային անգիտակցականը, որի բովանդակությունը կազմում են ժառանգաբար փոխանցված բնագոյները, տարբեր բնույթի արքետիպերը: Իսկ անձնական անգիտակցականը բացահայտվում է գիտակցության ներհոգեբանական ոլորտի համար, որը Յունգը անվանում է ներքին գիտակցություն¹⁶:

Հոգեվերլուծության լավագույն մեկնաբաններից մեկը՝ Վ. Մ. Լեյբինը, նախաձևը բնութագրում է որպես «հոգեկանի խոր նստվածքներ», որոնք կուտակվել են մարդկային ցեղի կենսագործունեության և «գոյության կռվի» հազարամյակների ընթացքում ձեռք բերված փորձի հիման վրա¹⁷: Իսկ Մ.Գ.Յարոշևսկին նախաձևը բնութագրում է որպես մարդկանց հոգե-

¹⁵ Նույն տեղում, էջ 116:

¹⁶ Տե՛ս Յու. Հովականյան, նշվ. աշխ., էջ 46-47:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 51:

կանի մեջ պահպանված կենդանական բնագոյների նման ինչ-որ բան, որը բնածին է տարբեր ռասաների համար և ներկայացնում է ոչ թե անձնական, այլ խմբային անգիտակցական¹⁸:

Նախածներն ընդունակ են թափանցելու գիտակցության մեջ և գիտակցվելու որպես խմբային պատկերներ կամ խորհրդանիշեր:

Յունգի տեսակետով՝ նախածնային պատկերներ են ընկած նաև դիցաբանության, կրոնի, արվեստի, երազների հիմքում, որոնք պահպանվում են անգիտակցականի մեջ և արթնանում համապատասխան պայմանների դրսևորման դեպքում¹⁹:

Ինչպես վերը նշեցինք, Սաքոն, իրոք, այս հավերժականի մտային ժառանգորդն է: Կարևոր չէ՝ գիտակցում է նա այդ, թե՛ ոչ: Էականն այն է, որ այս արքետիպերը դեռ շարունակում են ուղեկցել մարդուն. սրանք այն հին «խաչարձաններն» են, որոնք լուռ ձայն են տալիս հոգու աշխարհին և տանում փորձության: Սրանք անցյալին կապող միջ են: Այդ պատճառով իրական աշխարհը սկսում է կամաց-կամաց խույս տալ Սաքոյի մտապատկերում: Նա պայքարում է արտաքին աշխարհի դեմ՝ իր ներաշխարհի փրկության համար: Գնալով ավելի ու ավելի են մեծանում ահասարսուռ պատկերները, թափանցում նրա գիտակցության մեջ.

Ու խոլ պատկերներ, տգեղ, այլանդակ,
Անհեթեթ շարքով, խուռներամ, անկարգ,
Ծանրաշարժ եկան Սաքոյի դիմաց
Երևույթք եղան, անցնում են կամաց,
Խավար ու դանդաղ, ըստվերների պես,
Չար ժպիտներով ծանր ու սևերես...

Բնության շարժումն ու ձայները խորացնում են կասկածները, ծայր է առնում տագնապների շղթան՝

Սրընթաց պախրա՞, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռից
Անդունդը մի քար գըլորեց ոտով ...

Ամեն մի նոր երանգ ինչ-որ բան է տալիս հոգեկան դրամային և տանում, հանգեցնում հոգեկան լարման.

Գիշերվա **հովից տերև՞ն էր դողում,**
Երկչոտ մուկի՞կը վազեց պուճախում,
Թե՞ ոչխարների թույլ մընչոցն էր այն...

Սաքոն որոնում է ձայնը խավարում: Նրա փրկությունը ձայնն է՝ լույսի մի շողը, բայց այն չկա.

- Ո՞վ ես, էհե՛յ...ի՞նչ ես անում,
Ի՞նչ ես լըռել, **ձե՛ն** չես հանում...

Եվ կանգնել է նա կործանման ճանապարհին: Մնում է վերջին հույսը՝ ընկերոջ վերադարձը, որով աշխարհը կկենդանանար.

- Հա՛, իմացա, Գևոն կըլնի.
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի...

¹⁸ Տե՛ս նույն տեղը:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 52:

Վախեցնում է... հա՛, հա՛, հա՛, հա՛...

- Գևորգ...

Ձեռն- ձուռն չկա:

Եվ կանգնել է նա «**ահառաժ**»՝

Ու **վայրի հոգին** լեռնական մարդու

Ալեկոծում է կասկածն ահարկու...

Ընդամենը բանաստեղծական քսան տողում հեղինակը հոգեբանին բնորոշ բժախնդրությամբ հոգեվերլուծության է ենթարկում հերոսի ներքին հոգեբանական կոնֆլիկտը, ներքին պայքարը ես-ի առողջ և հիվանդ բևեռների միջև.

- Չէ՛, քամին էր էն... էն գիլի շըվաք...

էն աստղերն էին աչքերի տեղակ,

Որ լիսածակից ներս էին ընկել...

«Թումանյանը ցույց է տալիս նաև Սաքոյի թույլ ճիգերը՝ վանելու տագնապն ու վախը, բացատրելու այդ բոլորն ուրիշ կերպ,– նկատում է էդ. Ջրբաշյանը,– բայց այդ անգոր փորձերը չէին կարող փրկել Սաքոյին: Ինչքան շատ է նա ուզում հեռացնել կասկածը, այնքան վախը մեծանում է ու տիրապետում նրա հոգուն»²⁰: Առաջին տարբերակում հեղինակը Սաքոյի խելագարության տրամաբանությունը, պատճառահետևանքային կապերը փնտրում էր հերոսի անձից դուրս (նահապետական կյանքին վերաբերող մեծաքանակ տողեր, բնության նկարագրություններ, հերոսների կյանքից պատմություններ), իսկ վերջին՝ գրական-հոգեբանական առումներով կատարյալ տարբերակում խելագարության պատճառը որոնում է անձի «ներքին տիրույթում»՝ հերոսի մարդկային էության մեջ:

Ըստ Ֆրոյդի՝ «Վտանգի հանդեպ ցույց տրվող պատասխանը սովորաբար կազմված է սարսափի զգացումից և պաշտպանական գործողությունից, դրանց խառնուրդ է հանդիսանում»²¹: Սաքոն, ի վերջո, տեղի է տալիս իր իսկ ուղեղում ստեղծված չար ուժերի առաջ: Նա տառապում է իր իսկ մտքերից: Սաքոն տանուլ է տալիս նաև ֆիզիկապես՝

Ուզում է վերև մըտիկ տա մեկ էլ՝

Ու **սիրտ չի անում:**

Ականջ է դնում:

Նա արդեն հավատում է երևութական աշխարհի գոյությանը: Երևակայությունը դառնում է չափազանց իրական. կենդանացել էր ներսի աշխարհը, կենդանացավ և դրսինը. քաջքերը մարմին են առել, խոսում են, շշնջում, փսփսում են հետևից, որոնում են Սաքոյին: Չարքը ներսում է արդեն, և բնության ձայները Սաքոյի ներսում մեկնաբանվում են իբրև իրականության ձայներ: Լոռվա անտառում Սաքոն մնում է չարքերից հալածված. տեսլական աշխարհը դարձել է շոշափելիության աստիճանի իրական, և փախչում է Սաքոն խելագար: Չարքերը հասնում են նրան օձի մտրակով: Լուսինը պահել է իր սովորական բնավորությունը: Լոռեցի Սաքոյի խելագարության պատճառը նրա հոգեկերտվածքն է, այն ներքին էությունը, որով նա վերաբերվում է բնությանը: Խելագարն իր հոգեաշ-

²⁰ **Էդ. Ջրբաշյան**, Թումանյանի պոեմները, Եր., 1986, էջ 113:

²¹ **Ջ. Ֆրոյդ**, Հոգեվերլուծության ներածություն, Եր., 2002, էջ 266:

խարհում իրեն խելագար չի գգում: Սաքոյի հոգեաշխարհը վախկոտի չէ: Նա վառ երևակայություն ունի, որը հաճախ մարդուն տանում է խելագարության: Սա է Սաքոյի խելագարության խորհուրդը: Թունանյանը վերհանում է ճանաչելիության և անճանաչելիության խնդիրը: **Նա գնում է ճանաչողությունից դեպի անճանաչելիությունը, բացում մութ գիշերվա խորհուրդը:**

Ահռելի ձոր է: Մի կըտոր լուսին
Նայում է գաղտուկ, թաքչում ամպերում:
Էն մութ, ահավոր գիշերվա կիսին
Վազում է Սաքոն Լոռու ձորերում:

Ուշագրավ է, որ հենց նախաբանում Թունանյանը պատկերում է Սաքոյի փախուստն ու խելագարությունը, բայց Դև-Բեդի տեսքով՝

խելագար թռչում քարերի գըլխով

.....
Փընտրում է ծաղկած ավերը հին-հին,
Ու գոռում գիժ-գիժ.
- Վա՛շ-վի՛շ, վա՛շ-վի՛շ...
.....

Մութ անձավներից, հազար ձևերով,
Քաջքերն անհանգիստ՝ հըտպիտ ձայներով
Դևի հառաչքին արձագանք տալի,
Ծաղրում են նըրա գոռոցն ահռելի...

Հետաքրքրական է, որ Խ. Աբովյանը ևս իր «Վերք Հայաստանի» վեպում խոսում է խավարի մեջ մարդու հոգեկան տագնապի մասին. «Ամեն մարդ փորձած կըլի, որ **մութը ժամանակի** մարդ, որ մեկ գերեզմանատան կամ մեկ քանդված եկեղեցու դրաղով էլ ա անց կենում, **սիրտը թուլանում ա, քանը զարգանդում, հազար միտք հոգին կտրատում, քարերն էլ դև համարում ու հարամի, որ իրան կամենում են ուտիլ, շատ անգամ ուշագնա էլ ա ըլում:** Սրա պատճառը բոլորը էս ա, որ մարդ սովոր ա, ինչ տեղ տուն ա տեսնում յա շինություն, կարծելով թե մարդ էլ կըլի, ու ետո, որ **ծեն չի՛** լսում, էնպես կարծում ա, թե **անպատճառ չար հոգիք են էնտեղ բնակում...**»²² (ընդգծումները մերն են – Ն. Ս.): Իսկ Թունանյանը, ավելի առաջ անցնելով, մեկնում է խավարի խորհուրդը: **Միայն խավարի հեռացումը կարող է աշխարհը ճանաչելի դարձնել:** Հետաքրքիր է, որ պոեմի երկրորդ տարբերակում Թունանյանը նշում է «աշխարհի տակի» ծածուկ այրերի մասին, ուր որ «ապրում են» մութն ու գիշերը: Նա գիտի աշխարհի սկզբի մասին, որը և է խավարը: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ 1910 թ. գրեց «Հնդկական վեդաներից» բանաստեղծությունը.

**Գոյությունն ու անգոյությունն էն ժամանակ չկային,
Ու չկային էն ժամանակ ոչ երկինք և ոչ օդ:
Ի՞նչ էր շրջում, ո՞ր էր շրջում, և կամ ընչի՞ հովանու տակ,
Կամ կա՞ր արդյոք էս ջրերի սև անդունդը անհատակ:**

.....
Ի սկզբանե մութը ծածկված էր մութով,

²² Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, Եր., 1981, էջ 262:

**Եվ աշխարհը ողջ մի վիճակ էր խավարչտին
Բայց, начало, որ ծածկված էր մութի տակ,
Ջերմի ուժից ծնունդ առավ նախ մենակ²³:**

Ջարմանալի է՝ այս նույն մեկնությամբ են աշխարհի սկիզբը բացատրում «Աստվածաշունչը», նաև հունական դիցաբանությունը. «Ամենից առաջ գոյություն է ունեցել միայն հավիտենական, անսահման մթին Քաոսը, նրա մեջ էր ամփոփված աշխարհի կյանքի աղբյուրը: Ամեն ինչ առաջացել է անսահման Քաոսից... Անսահման Քաոսը ծնեց հավերժական Խավարը՝ Էրեբոսը և մութ գիշերը՝ Նիքսը: Իսկ Խավարից ու Գիշերից առաջ եկան հավերժական Լույսը՝ Եթերը, հրճվալից ու պայծառ օրը՝ Զեմերան: Լույսը հորդեց աշխարհով մեկ, և գիշերն ու ցերեկը սկսեցին հաջորդել իրար»²⁴:

Սաքոյի բանականությունը հայտնաբերում է խավարի խորհուրդը, որից էլ նա խելագարվում է՝ «Բըռնեցե՛ք, փախա՛վ Սաքոն խելագար...»: Ինչպես նկատում է Վ. Դավթյանը, «Յուրաքանչյուր թուրքացի իրեն հատուկ գրական կախարհանքով պոեմում պատկերել է հոգեպես աններդաշնակ և անկատար մարդ-արարածի ողբերգությունը: «Ահռելի ծոր է: Մի կտոր լուսին» իրարամերժ երկմիասնությունը նաև Սաքոյի էության մեջ ոգեղենի և հոգեղենի միջև ճեղքվածքն էր խորհրդանշում... Սաքոն շատ է հեռու ներդաշնակությունից, դրա համար էլ կործանվում է»²⁵: Ընդհանրապես, ոչ ներդաշնակ անհատը թուրքացույցի մոտ դատապարտված է կամ խելագարության, կամ ինքնասպանության, կամ էլ կործանման:

Նուրբ է դիտարկում Յր. Թամրազյանը, որ եթե հետևենք մարդ արարածի կենսական ու հոգեբանական փորձին, ապա միանգամայն ցայտուն կընդգծվի բացասական բազում լիցքերի ճնշման, ինքն իր հետ մնացած մարդու կասկածների ու ներքին մաքառումների խնդիրը, որը հավերժական է և ունի շատ բարդ կառուցվածք. «Թուրքացույցին այստեղ մեծապես հուզել են հոգեբանական-մարդագիտական բարդ խնդիրներ... հոգեբանական գյուտերի օգնությամբ ընդգծում է ողբերգականը, հասարակ մարդուն դիտում նաև լայն շրջանագծի վրա»²⁶:

Թուրքացույցին այս պոեմով բերում է մի կենսափիլիսոփայություն՝ մարդը միշտ էլ ճշմարտության մեջ է ու նրանից հեռու և ճանապարհ ունի՝ հասնելու իր մեջ եղած աստվածային ներդաշնության: Այս իմաստով էլ Թուրքացույցի գեղարվեստական երկը առաջ է անցնում իր ժամանակից՝ պահպանելով ազդեցության ուժն ու արդիականությունը:

НАРА САРГСЯН – Туманьяновская интерпретация безумия в поэме “Лориец Сако”. – Статья посвящена взаимоотношениям человека с природой в известной поэме Ованеса Туманяна и в этом контексте – различным проявлениям человеческого безумия и тому, как их воспринимают окружающие. Несмотря на нападки ряда критиков, утверждавших, будто образ Сако психологически неубедителен, Туманян не пошёл у них на поводу, но в окончательной редакции поэмы глубже обосновал драму своего героя.

²³ **Յուր. Թամրազյան**, ԵԼԺ, հ. 2, Եր., 1991, էջ 320:

²⁴ «Յին Յունաստանի լեգենդներն ու առասպելները», Եր., 1989, էջ 18:

²⁵ **Վ. Դավթյան**, Ինչու խելագարվեց Անուշը, Եր., 1994, էջ 29:

²⁶ **Յր. Թամրազյան**, Աշխարհ, էջ 119:

В поэме подробно изображены мотивы, повлиявшие на психику пастуха Сако. Мы видим, что природа для него, по сути, сверхъестественна, всякое её явление одушевлено и персонифицировано, вот откуда его душевное смятение. Мир кажется пастуху непознаваемым, это порождает ужас у него в душе и калечит разум.

NARA SARGSYAN – *Tumanyan’s Interpretation of Madness in the “Loretsi Saqo” (“Saqo from Lori”) Poem.* – The interpretation of the man-nature relation in Hovhannes Tumanyan’s “Saqo from Lori” poem, the forms of the manifestation of the man’s madness and the issues of public perception methods in this plane have been considered in the article. Despite of serious disputes raised in connection with this poem, where Saqo from Lori has been considered as a psychologically unconvincing character, Tumanyan remained steadfast (though he was very considerable towards everybody’s opinion), he more deepened the internal drama of his hero.

The reasons of the madness of Saqo from Lori, the process and psychological manifestations of his internal drama have been analyzed in detail in the poem, emphasizing the quality of madness and not only the mental state. At last the author comes to a conclusion that nature gains the man’s mental-cognitive world, when all the natural things are also preternatural for the man, hence the mental horror and suspicion come from here. The reason of the madness of Saqo is in his internal world, in his essence. The issue of the man’s atavistic perceptions has been also considered in the image of Saqo from Lori. Saqo sees soul and life in everything, both animate and inanimate, and life does not exist out of this plane. Out of him the incognizable destroys his soul. So, Saqo from Lori is a victim of the mythical perception of the nature.